ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2021 թվականի սեպտեմբերի 3-ի հարցման կարգով նիստի
N 2 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի և Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարության հետ համատեղ հայտարարված գիտական հետազոտությունների հայ-գերմանական համատեղ թեմաների աջակցության **«ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ - ԳԿՀԴՆ - 2022»** մրցույթի շրջանակներում՝ **«Դիմակայության ամրապնդումը Covid-19 համավարակի պայմաններում»** թեմայով (հայկական կողմի խմբի ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր **Թաթուլ Մելսիկի Մկրտչյան**, գերմանական կողմի խմբի ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր **Dr. Alexander Steckelberg**) համատեղ մրցույթի հայտը երաշխավորելու մասին հարցը:

Covid-19 համավարակի արդյունքում տնտեսական աճի և զարգացման առանցքային գործոն է դարձել համավարակային իրավիճակը, որն էլ իր հերթին սերտ կապված է տվյալ երկրի առողջապահական համակարգի կարողությունների և դիմադրողականության հետ: Սա, բնականաբար, լիովին նոր խնդիրներ է դնում տնտեսագիտական համայնքի առաջ խորությամբ բացահայտելու և հասկանալու այդ փոխառնչությունները՝ վարվող քաղաքականություններում այդ կապերը հաշվի առնելու նպատակով: Հետազոտության նպատակն է մշակել Հայաստանի Հանրապետությունում ճգնաժամերի կառավարման մեխանիզմներ՝ հաշվի առնելով առողջապահական համակարգի և տնտեսության դիմակայության միջև առաջացած նոր կապերը և առաջատար երկրների փորձը: Հիմնվելով

Գերմանիայում գործող հետազոտող թիմի հետ ձևավորվելիք համագործակցության վրա, այդ մեխանիզմների մշակման ժամանակ առավելագույնս հաշվի կառնվի հենց Գերմանիայի փորձը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- **Երաշխավորել** Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի և Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարության հետ համատեղ հայտարարված գիտական հետազոտությունների հայ-գերմանական համատեղ թեմաների աջակցության **«ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ - ԳԿՀԴՆ - 2022»** մրցույթի շրջանակներում՝ **«Դիմակայության ամրապնդումը Covid-19 համավարակի պայմաններում»** թեմայով (հայկական կողմի խմբի ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր **Թաթուլ Մելսիկի Մկրտչյան**, գերմանական կողմի խմբի ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր **Dr. Alexander Steckelberg**) **համատեղ մրցույթի հայտը** և այն ներկայացնել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտե:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2021 թ. սեպտեմբերի 3

Երևան